

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2021 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» N 2209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
2. Որոշման 1-ին կետով սահմանված N1 հավելվածի առաջին սյունակի 7-րդ, 9-րդ և 10-րդ տողերում «պաղեցրած» բառը փոխարինել «սառեցրած» բառով:
3. Որոշման 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետում «սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «հունիսի 20-ից 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:
4. Որոշման 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Չբաշխված ներմուծման թույլատրելի ծավալը լիազոր մարմնի կողմից բաշխվում է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև՝ հավասարաչափ, սակայն յուրաքանչյուր մեկ մասնակցի մասով չպետք է գերազանցի չբաշխված ներմուծման թույլատրելի ծավալի 20 տոկոսը»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: